ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան

06/12/2022

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/4
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 23 անդամներ:

Բացակա էին՝ Էմիլ Հարությունյանը, Նազիկ Հարությունյանը, Նաիրա Մելիքյանը, Գևորգ Պողոսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Արթուր Մովսիսյանը, Աննա Չոբանյանը, Եղիշե Ավետիսյանը, Դիաննա Երեմյանը

Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայանը

Նիստը արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Վանիկ Բաբաջանյանը

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 65-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 06-ի երրորդ նստաշրջանի արտահերթ չորրորդ նիստի հետևյալ օրակարգը.
1) Աբովյան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 4-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին.
3) Աբովյան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին.
4) «Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի ոռոգման համակարգի ապահովման» ծրագրին համաձայնություն տալու մասին.

5) Աբովյան համայնքի ավագանու անդամներին դրամական փոխհատուցում տրամադրելու մասին.
6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին.
7) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին.
8) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի օգոստոսի 15-ի N 107-Ա որոշումը մասնակի անվավեր ճանաչելու մասին.
9) Վարազդատ Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակելուն համաձայնություն տալու մասին.
10) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Պտղնի գյուղի 12-րդ փողոցի թիվ 1/1 հասցեում գտնվող հողամասը Մեսրոպ Խալաթյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
11) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0138-0047 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
12) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0138-0048 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
13) Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղի 1-ին թաղամասի և 3-րդ փողոցի միջակայքում գտնվող տարածքը 2-րդ թաղամաս անվանակոչելու մասին.
14) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող 0.7886 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին.
15) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերն աճուրդային կարգով օտարելու մասին.
16) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող ավտոմեքենան աճուրդային կարգով օտարելու մասին.
17) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինություններն օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
18) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Օգոստոսի 23-ի փողոցի թիվ 10/6 հասցեում գտնվող հողամասը Բաբկեն Հովակիմյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
19) Աբովյանի մարզահամալիրը Վահագն Թումասյանի անվամբ անվանակոչելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգը ներկայացնելու ընթացքում նիստերի դահլիճ ներկայացան ավագանու անդամներ Պ.Ցուգունյանը, Տ.Գեղամյանը, Վ.Առաքելյանը, Մ.Գասպարյանը, Մ.Հարությունյանը, Գ.Օսիպյանը, Ն.Միքայելյանը և Ն.Հակոբյանը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 169-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 4-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի «Աբովյան համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին» N 4-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամ Գ. Գալստյանը հայտնեց, որ մշտական հանձնաժողովի նիստը չի կայացել:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 170-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1-ին հոդվածի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն N 1-N 8 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 171-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի 2023 թվականի բյուջեում հատկացնել 10 000 000 (տաս միլիոն) դրամ գումար՝ 2023 թվականի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:
2. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանվում են բոլոր ոլորտներն ու բնակավայրերը:
3. Մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ առաջարկներ ներկայացնելու իրավասություն ունեն միայն համայնքի հաշվառում ունեցող չափահաս բնակիչները:
4. Համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում, 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրում:
2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանու հավանությանը.
3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի շուրջ ծավալվեց քննարկում և առաջարկվեց, որ մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ առաջարկություններ ներկայացնելու իրավասություն ունենան նաև հասարակական կազմակերպությունները (հասարակական կազմակերպություններ, արհեստակցական միություններ, մասնագիտական ասոցիացիաներ, մեդիա խմբեր, հիմնադրամներ և քաղաքացիների այլ խմբեր):
Նախագիծը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 172-Ա/

Լսեցին

«ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՄՈՒՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ» ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Տալ համաձայնություն «Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի ոռոգման

համակարգի ապահովման» ծրագրին՝ Աբովյան համայնքի կողմից մինչև 20 % համաֆինանսավորմամբ:
2. Աբովյան համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով հետևել ծրագրի իրականացման աշխատանքներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 173-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 11-րդ հոդվածով, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու անդամներին իրենց պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց Աբովյան համայնքի բյուջեով նախատեսված համապատասխան գումարներից տրամադրել ամսական դրամական փոխհատուցում՝ յուրաքանչյուրչին 75000 դրամ:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով նախատեսված դրամական փոխհատուցումը ավագանու անդամներին է տրամադրվում.
1) առանց ավագանու անդամների կողմից իրենց պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման,
2) դրամական փոխհատուցում ստանալու ցանկության վերաբերյալ ավագանու անդամի դիմումի հիման վրա, որը ներկայացվում է Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին, ավագանու անդամի՝ իր լիազորությունների ստանձնումից հետո,
3) անկանխիկ, յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդող ամսվա 10-ը:
3. Ընդունել ի գիտություն, որ.
1) ավագանու անդամին տվյալ ամսում դրամական փոխհատուցում չի վճարվում, եթե նա այդ ամսվա ընթացքում բացակայել է Աբովյան համայնքի ավագանու և մշտական հանձնաժողովի բոլոր նիստերից, բացառությամբ՝ այն դեպքերի, երբ տվյալ ամսում Աբովյան համայնքի ավագանու և մշտական հանձնաժողովի նիստեր չեն եղել,
2) սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված բացակայությունները հիմնավորվում են՝ ավագանու մշտական հանձնաժողովների նախագահների՝ հանձնաժողովի նիստերին ավագանու անդամների մասնակցության մասին տեղեկանքներով և Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի կողմից վարվող ավագանու նիստին մասնակցած ավագանու անդամների հաշվառման

մասին տվյալներով, որոնք ներկայացվում են Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև հաջորդ ամսվա 5-ը ներառյալ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և գործողության մեջ է դրվում 2023 թվականի հունվարի 3-ից:

Որոշվեց նախագծը տեղափոխել հաջորդ նիստի քննարկմանը լրացուցիչ հիմքեր ձեռք բերելու և պետական կառույցներից հարցումներ անելու նպատակով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը չի տվել դրական եզրակացություն, թողնելով ավագանու նիստի քննարկմանը:

Կողմ – 0 դեմ – 14 ձեռնպահ – 8 չի քվեարկել 1

Որոշումը չի ընդունվել

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Աբովյան համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին» N 02-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 174-Ա/

Լսեցին
«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և հիմք ընդունելով «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Աբովյանի գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի տնօրենի գրությունը (մուտք՝ 2022 թվականի օգոստոսի 03-ի N S-914) Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Աբովյան համայնքի Մայակովսկի, Գեղաշեն, Կաթնաղբյուր, Կամարիս և Արամուս գյուղերում առկա միջին և ցածր ճնշման գազատարները հաշվառել համայնքի հաշվեկշռում՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքերը անհատույց և անժամկետ օգտագործման պայմանագրով տրամադրել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Աբովյանի գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղին՝ սպասարկում իրականացնելու նպատակով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 175-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի N 107-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՍՆԱԿԻ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Անվավեր ճանաչել Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի օգոստոսի 15-ի «Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին» N 107-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 22-րդ տողը:
2. Համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառել անվավերության հետևանքները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 176-Ա/

Լսեցին

ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 29-36-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 25-Ն և 26-Ն որոշումների, հաշվի առնելով Վարազդատ Համբարձումյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի նոյեմբերի 01-ի N Ք-5530) Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Համաձայնություն տալ Վարազդատ Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2018 թվականի փետրվարի 08-ի N 08022018-07-0076 վկայական) Աբովյան քաղաքի Հանրապետության 20/23 հասցեում գտնվող 52.0 քառակուսի մետր մակերեսով հասարակական կառուցապատման հողամասի փոխանակմանը Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի սեպտեմբերի 13-ի N 13092022-07-0043 վկայական) Աբովյան քաղաքի Սևանի փողոցի թիվ 2/7 հասցեում գտնվող 51.8 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի հետ:
2. Վարազդատ Համբարձումյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Վարազդատ Համբարձումյանի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարազդատ Համբարձումյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 177-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄԵՍՐՈՊ ԽԱԼԱԹՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի

26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ ենթակետերի, 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 25-Ն և N 26-Ն որոշումների և հիմք ընդունելով Մեսրոպ Խալաթյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի հուլիսի 18-ի N Ք-3433), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է***.

1. Մեսրոպ Արիստակեսի Խալաթյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2020 թվականի հուլիսի 13-ի N 13072020-07-0083 վկայական) Աբովյան համայնքի Պտղնի գյուղի 12-րդ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող 07-054-0006-0024 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 800.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի նոյեմբերի 02-ի N 02112022-07-0124 վկայական) Աբովյան համայնքի Պտղնի գյուղի 12-րդ փողոցի թիվ 1/1 հասցեում գտնվող 07-054-0006-0029 կադաստրային ծածկագրով 94.7 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը, կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-054-0006-0024 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատեր Մեսրոպ Արիստակեսի Խալաթյանին:

2. Մեսրոպ Խալաթյանը պարտավոր է՝

1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 420 639 (չորս հարյուր քսան հազար վեց հարյուր երեսունինը) դրամ՝ ընդլայնվող հողամասի կադաստրային արժեքը.

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումները կատարվում են Մեսրոպ Խալաթյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մեսրոպ Խալաթյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 178-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-043-0138-0047 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Լավրենտ Գալստյանի հայտը (մուտք՝ 2022

թվականի նոյեմբերի 25-ի N Ք-6054), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Լավրենտ Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի հունիսի 17-ի N 17062022-07-0142 վկայական) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0138-0047 կադաստրային ծածկագրով 0.1127 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (հնդավոր) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ մրգերի և բանջարեղենի մշակման և պահածոյացման (չներառված ուրիշ խմբավորումներում) տնտեսություն կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լավրենտ Գալստյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 179-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-043-0138-0048 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Էդուարդ Աղաբեկյանի հայտը (մուտք՝ 2022 թվականի նոյեմբերի 25-ի N Ք-6053), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Էդուարդ Աղաբեկյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի հունիսի 17-ի N 17062022-07-0186 վկայական) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0138-0048 կադաստրային ծածկագրով 0.1106 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (հնդավոր) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ մրգերի և բանջարեղենի մշակման և պահածոյացման (չներառված ուրիշ խմբավորումներում) տնտեսություն կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն

համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդուարդ Աղաբեկյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 180-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԵՎ 3-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՄԻՋԱԿԱՅՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԸ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 3-րդ բաժինների պահանջների, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղի 1-ին թաղամասի և 3-րդ փողոցի միջակայքում գտնվող տարածքը անվանակոչել 2-րդ թաղամաս (հատակագիծը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 181-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.7886 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 22.07.2022 թվականի N 01.2/12/04305-2022 գրությունը (մուտք՝ 2022 թվականի հուլիսի 26-ի N Պ-1080) և հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 15-ի N 146 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Փոխել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2020 թվականի փետրվարի 27-ի N 27022020-07-0089 վկայական) Կաթնաղբյուր գյուղում գտնվող 07-034-0104-0013 կադաստրային ծածկագրով 0.7886 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի (վարելահող) նպատակային նշանակությունը որպես բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 182-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. 2023 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ համաձայն հավելվածի 1-ի:
2. 2023 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերը՝ համաձայն հավելվածի 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն՝ առաջարկելով նախագծի հավելված 1-ում կատարել փոփոխություններ՝ ներկայացված ցանկից հանել 5-րդ տողը, իսկ 7-րդ և 8-րդ տողերում ներկայացված հողամասերի մեկնարկային գները բարձրացնել:

Նախագիծը դրվեց քվեարկության առաջարկված փոփոխություններով:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 183-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. 2023 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2012 թվականի մայիսի 11-ի N 01AA496959 վկայական) 007 LL 70 հաշվառման համարանիշի, տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր՝ HJ614083, շարժիչի համարը՝ 0995731, նույնացման համարը՝ JTEBX3FJ205012185, թողարկման տարեթիվը՝ 2011 թվական «TOYOTA LAND CRUISER 150 2.7 GAS» մակնիշի թեթև մարդատար ավտոմեքենան:
2. Աճուրդի մեկնարկային գինը սահմանել 9 000 000 (ինը միլիոն) դրամ՝ հաշվի առնելով «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի օգոստոսի 4-ի թիվ «271-02/Վ-022» գնահատման հաշվետվությունը:
3. Համայնքի ղեկավարին՝ աճուրդը կազմակերպել «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի պահանջներին համապատասխան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 184-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. 2022 թվականի ընթացքում օտարել կամ վարձակալության իրավունքով տրամադրել իրավահարաբերության պահին գործող Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշման համաձայն համայնքային սեփականություն ճանաչված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով

օրինականացված ինքնակամ կառուցված բնակելի և հասարակական նշանակության կառույցները՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ Աբովյան համայնքի սեփականություն ճանաչված ինքնակամ կառույցներն ուղղակի վաճառքի կարգով գնման նախապատվության իրավունքով դրանք իրականացրած անձանց օտարման, իսկ գնման նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում՝ վարձակալության իրավունքով տրամադրման գործընթացն իրականացնում է Աբովյան համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով և գներով:
3. Ինքնակամ կառույցն իրականացրած անձանց կողմից գնման, իսկ այնուհետև վարձակալության իրավունքով տրամադրելու նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում գույքն աճուրդային կարգով օտարելու մեկնարկային գինը սահմանվում է անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի կողմից գնահատված շուկայական արժեքի չափով, իսկ վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքում՝ մրցույթի պայմաններում, որպես մեկնարկային գին սահմանվում է ավագանու կողմից ընդունված վարձավճարի (վճարի) չափը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 185-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 10/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱԲԿԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ ենթակետերի, 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 25-Ն և N 26-Ն որոշումների և հիմք ընդունելով Բաբկեն Հովակիմյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի ապրիլի 28-ի N Ք-1814), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***.
1. Բաբկեն Վարուժանի Հովակիմյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի մարտի 02-ի N 02032022-07-0165 վկայական) Աբովյան քաղաքի Օգոստոսի 23-ի փողոցի թիվ 1/10/5 հասցեում գտնվող 07-002-0068-0018 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման 227.4 քառակուսի մետր մակերեսով հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի նոյեմբերի 07-ի N 07112022-07-0113 վկայական) Աբովյան քաղաքի Օգոստոսի 23-ի

փողոցի թիվ 10/6 հասցեում գտնվող 07-002-0068-0016 կադաստրային ծածկագրով 136.9 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասը, կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-002-0068 0018 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատեր Բաբկեն Վարուժանի Հովակիմյանին:
2. Բաբկեն Հովակիմյանը պարտավոր է՝
1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 2 214 577 (երկու միլիոն երկու հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր յոթանասունյոթ) դրամ՝ ընդլայնվող հողամասի կադաստրային արժեքը.
2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումները կատարվում են Բաբկեն Հովակիմյանի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Բաբկեն Հովակիմյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 186-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐԸ ՎԱՀԱԳՆ ԹՈՒՄԱՍՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 2-րդ պարբերության.«Բացառիկ դեպքերում նշանավոր որևէ անհատի անվամբ մինչև նրա մահվան հինգ տարին լրանալն անվանակոչում կամ անվանափոխում կատարելու վերաբերյալ»: Հիմք ընդունելով 2022 թվականի նոյեմբերի 1-ի հանրային լսումների դրական եզրակացության արդյունքները, հաշվի առնելով Աբովյան համայնքի ավագանու «Հանրապետություն» խմբակցության առաջարկը՝ Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Նաիրյան փողոցի թիվ 3 հասցեում գտնվող մարզահամալիրը (հիմք՝ 2018 թվականի մարտի 20-ին տրված սեփականության իրավունքի գրանցման վկայական N 20032018-07-0041) անվանակոչել Վահագն Թումասյանի անվամբ՝ «Վահագն Թումասյանի անվան մարզահամալիր»:
Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 187-Ա/

Ավագանու անդամներ

ՎԼԱԴԻՄԻՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՌԱԶՄԻԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ԳՈՌ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՄԵԼԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ԶԱՐՈՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԷԴՎԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՍՊՈՒՐԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՊԱՎԵԼ ՅՈՒԳՈՒՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՕՍԻՊՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ_____